

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

- 1. Արթուրյան Պարտաճանաչութիւնը . . . Կ. Վ. . . 489
- 2. Աստուծոյ կամ Տրվնքի Արքայութեան գաղափարը . . . Կ. Վ. . . 491
- 3. Թուղթ Կոմիտասայ Հայոց Կաթողիկոսի ի Պարսս . . . Կ. Վ. . . 494
- 4. Նիւթեր Հայոց Եկեղեց. պատմութեան 2. Ս. . . 495
- 5. ԵՆԵՂՆՅԱՆ ԶՐՈՒԽՈՐ 500

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏԱԲԱԿԱՆ

- 6. — ՍԱՐՆ Ի ՎԵՐ. Յ. Եովնանիսեան . . . 503
- 7. Պարթեւները Պարսկաստանում . . . Ն. Զ. . . 505
- 8. Մի ակնարկ Հայաստանի պատմական անցեալի վերայ . . . Ս Կ. . . 507
- 9. Նամակ Խմբագրութեան Մեծորդ Արքեպիսկոպոս . . . 512

ՄԼՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- 10. Կրթ. կան նոր ինչորևոր . . . Ս. Մ. . . 513
- 11. Պատկերներ Շիրակի գիւղ. կենցեցից Ե. Մ. . . 516
- 12. ՄԱՆՐԱՂՈՒԹ 519

ԱԶԳԱՅԻՆ

- 13. ԵՆԵՂՆՅԱՆ ՀԱՅԱՏԱՆԵԱՅՑ Մայր Աթոռ. ՏԱՃԵՎԱՅՔ 524

ՊԵՏՏՕՆԱԿԱՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՅԱՆՅԻՂՈՒՄ.
ԺԱՆՈՅՈՒՄ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՅԱՆՅԻՂՈՒՄ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ. ՆՈՅՆՄԵՐ.

ԹՈՒՂԹ ԿՈՄԻՏԵԱՍԵՅ ՀԱՅՈՅ ԿԱՌՈՒՂԻ-ԿՈՍԻ Ի ՎԱՐՍՍ.

Ամենայն բան ջանիւ* ասէ ուրեմն ժողովոյն ի խօսն իւրում՝ իմաստունն Սողոմոն՝ մանաւանդ խօսել բանս մտաւորս և լսել յումէքէ՛ զհանձարով ասացեալն, որք են աշխարհական գրօսանայ և ցնորից երկրի խօսք՝ ի մարդկանէ ասացեալք: Որչափ ևս առաւել ի Գրոց սրբոց բերանովք արժանաւոր մարդկան՝ սպասաւորաց պատգամացն Աստուծոյ ճառք գտցին ապաշխարութեամբ լի լսողաց իմանալ քան թէ սոցա ասել՝ Հոգւոյն շնորհիւ: Վասն որոյ կարօտանամ յոյժ շնորհիւ Զրիստոսի ևս ասօղս, զոր մարդոյ բերանով ոչ է արժան ումէք խօսել, բայց թէ բերան Աստուծոյ որ կարացել լինել զպատուականն հանելով յանարգէ, և կամ որպէս միւսն թէ եզ գերբան իմ սուր սուսեր** ապա համարձակեցի խօսել հրամանաւ Տեառն և ոչ լռել, զի ժողովուրդ բազում լիցի Զրիստոսի Եւ

մանաւանդ յոյժ դժուարին է լինել հասկաքաղ ի հունձս և ճաքաքղ ի կուժս՝ զայլոց յառաջագոյն զբանս գրոց ասացեալ մեծաբնութեամբ ոմանց թերևս և ի զիրս տպուորեալ է զիմաստանս վասնզի բազմաժամանակեայն և հինն որպէս զինի յախորժելի է յարբմունս քան զնորս. նոյնպէս և տարրացեալ զբանն զրազում՝ ժամանակս ի լսողացն միտս՝ մանաւանդ զի և ոչինչ սխալանք ուղիղ հաւատոյ գտանիցին յառաջագոյն ասացեալն, և ոչ աննշանից ոմանց կամ սակաւուց վարդապետութիւն բանից իցէ լինել: Դեկ իմ՝ յաստուածայինսն թեակոխելով մտածութիւնս՝ զյառաջաբերութիւն բանիցն ընծայեցից, և զայս ոչ նորոգաձեւութեամբ, յազապ վերին և լուսաշաւիղ դանձուն պատուականի, որ է փրկութիւն աշխարհի թեպէտ և յաման ծածկեալ ըստ Առաքելոյն ձայնի* վասնզի չէ ծագեալ առ նոսա լուսաբութիւն աւետարանի փառացն Զրիստոսի բայց ոչ թաքչի ի սիրողաց իւրոց՝ Հասանէ առ ցանկացօղս իւր,** զի զմտաւ ածելով ըզնմանէ՛ կատարեալ իմաստութիւն է աւարտել զանուն նորա ուղիղ հաւատովք, արմատ անմահութեան ըստ Սողոմոնեան բանին՝ առաւել որ ի մահ Որդւոյն Աստուծոյ կենդանացեալք հաղորդեցան անձառարար, զճոգսն սրբոց զյորդեգրութեանն շնորհս յինքեանս բերելով: Գրեալ է, թէ իմաստունն ի ժամանակին յայնմիկ լռեցէ, բայց այժմ՝ ժամանակս զիս պահանջէ՛ վասն արտաբնոցն, որք ոչ են յայսմ դաւթէ, և համարձակութիւն տայ, թէ Գնացէք մինչ զլոյսն ունիք*** ի բարեաց գործոց առաքինութիւնս անխափան և թէ յամենայն ժամ պարտ է ի բարիս նախանձաւոր լինել, և դարձեալ՝ յՅօսեցայ ըզվկայութիւնս Զո առաջի թագաւորաց և ոչ ամաչեցի.՝ առանց դանդաղանաց մեք եղիցուք փոխանակ բաղմաց սատարութիւն ազօթից իմոցս հօտի Քաջալերեալք հասցուք ի կատարումն բարեաց, և ի նշանակեալ նպատակ երանելոյն Պօղոսի, որոյ պարծանք՝ իտալն և ազատութիւն՝ յերկինս և կատարի-

* Ժող. Ա. 8 ** Օթ. որպէս սուսեր սուր:

* Բ. Կորնթ. Դ. 4. ** Իմաստ. 2. 14. *** Եղե. ԺԲ. 55. 1 Մաղմ. ԺԺԳ. 46.

չրն՝ Յիսուս: Եւ դարձեալ թէ Յիշեցէք զառաջնորդս ձեր: որք խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ: Հայեցեալ ցելս զնացից նոցա: նմանօրք եղերուք հաւատոցն նոցա: ¹ և դարձեալ թէ նախանձաւոր լերուք շնորհացն որ լաւն են: ² Եւ մի՛ տարրասցի յիմն խորհրդիցն լուսութեամբ պատուել զսակաւ բնութիւնն իմ: և մի՛ յուրացեալ լքայց զողիտութիւնս բաղբաղելով: և մի՛ քան զեզեալն օտարաձայնեալ: այլ որպէս բանս է՝ թէ հաստատուն հիմն Աստուծոյ կայ և ունի զկնիքս զայս: քանզի զիտեմ՝ յօ հաւատացեալն եմ: և հաստատեալն եմ: թէ կարող է զաւանդն իմ պահել: և զգաւանութիւնս ուղղափառութեան հաւատոյ: զի ոչ նոր սքանչելիք: ուր զի և հովուացն ընդունել շնորհս մարգարէութեան: և ձկնորսաց լինել աւետարանիչ բանին Աստուծոյ: և սարեփթուհի ի սովի կերակրի մարգարէի: և բանի և աղբիւր ջրոյ կենդանւոյ անձին սամարուհոյ: Ունիմ և յոյս քաջաբերութեան յԱստուածաշունչ զրոց յարմարական տեսողութեամբ ըստ զանազան զիմաց՝ ընդ միտս ածելով զայնոսիկ: որք այսպիսեօքս վարեցան: առ որս առատապէս զեղան շնորհք մարգարէութեանն քրիստոսի: քանզի նոյն Տէր է: բաւական բողոքեցուն: որ կարգան առ նա: Պարզեացի և ինձ բան ի Բանէն: բանալ բերանոյ իմոյ: խօսել զխորհուրդն քրիստոսի՝ պտղանձեցուցանել զթշնամիսն ուղղափառ հաւատոյ: քանզի էն ոմանք՝ ըստ աւետարանին պատմութեան: ունելով զընտեսս զառանց և զլեզուս իւրեանց սրեալ ի հայհոյութիւն սուրբ Ծրրորդութեանն: յորմէ հրաժարեցոյց զմեզ Որդին Որոտման՝ ոչ ընդունել ի տուն և ոչ ողջունել բանիւ: և զնոցին վարդապետութիւնս անուանել ամպս անջրգիս: ծառս պողպտորոյս: կրկնամեռս՝ նիւթս հրոյն յախտեանականի: որք վառեն անձանց զհուր գեհնին՝ սնուցանեն զորդն անմահ:

Արդ՝ ոչ յամել ի նախերգութեանս: այլ պատրաստաբար և խոհականագոյնս յստուածայինսն վերաձգել զմիտս: ես և հաւատացեալ ինձ հօտս այսպէս հաւատամք և

խոստովանիմք: որպէս և հանգիտապատիւ սուրբն Գրիգորիոս: հայրապետ Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստան աշխարհիս ուսոյց մեզ:

Հաւատամք ի Հայր՝ ի Տէր: Արարիչ երկնի և երկրի: երեւելաց և աներևութից: և ի Միածին յՈրդին Աստուծոյ: որ ի Հօրէ և առ Հօր: և ընդ Հօր: և ի Սուրբ Հոգին: որ ի նոցունց էութենէ: և նովաւ արար զամենայն՝ որ է մի աէրութիւն: մի զօրութիւն: մի աստուածութիւն: Հայր յանձնէ: Որդի ի Հօրէ: Հոգի ի նոցունց ի նոցին՝ իսկութեամբն: էութեամբն: աստուածութեամբն: երեք անձինք: մի կոտարեալ կամք՝ հարթ: հաւասար: հասարակ՝ ի բարձրութիւնս: ի խորութիւնս: ի լայնութիւնս: յերկայնութիւնս: մի բնութիւն Աստուածութեանն: մի պսակ Ծրրորդութեանն: և լի են երկինք և երկիր փառօք նորա:

Այսպէս հաւատամք և խոստովանիմք և երկրպագեմք սրբոյ Ծրրորդութեանն ի Միութիւն անպրնոյնպէս և սրբոյ Միաւորութեանն յԾրրորդութիւն անգր՝ անբառք: անխառնք: անսկզբունք: համազոյականք: Ձի որպէս անխառնելի է սուրբ Ծրրորդութիւնն՝ նոյնպէս և անբաժանելի: անխառնելի է յազգս յիւրաքանչիւր յատուկ անձնաւորութեանն: իսկ անբաժանելի՝ վասնզի ամենակալ է Հայր: ամենակալ Որդի: ամենակալ Հոգին սուրբ՝ մի բնութիւն Աստուածութեանն: մի իշխանութիւն: մի զօրութիւն: մի պետութիւն: Եւ ի վերջին ժամանակս Միածին Որդին Աստուծոյ: կամօք Հօր և իւր և սրբոյ Հոգւոյն: վասն մեր և վասն մերոյ փրկութեան խոնարհեցոյց զերկինս և էջ յարգանդ կուսին: և առ մարմին ի Մարիամայ սրբոյ կուսէն Աստուածածնէ: և միացոյց զանմեռսն ընդ մեռոտն: և զապականացուն ընդ անմահ աստուածութեան իւրոյ խառնեաց և միացոյց: և արար անապական՝ զի առանց հակառակութեան նուազն ի լաւէ անտի օրհնեցի: Աստուած վայելչարար ծնաւ ի Սրբոյ Կուսէն: որոյ հետք կուսութեանն ոչ ապականեցան: և ի խանձարուրս պատեցաւ կաթնասուն լեալ: և յետ երկոտասան ամի եկն ի տաճարն: զի յայտնի արացէ զիւր աստուածութիւնն: ի վերայ երկրի երեւեցաւ: ընդ

¹ Ծբբ. Ժ. 7.
² Ա. Կորնթ. ԺԲ. 51.

մարդկան շրջեցաւ. միաւորութեամբ անօրէնութեանն քաղցեալ և ծարաւեցաւ ոչ սոսկ մարդկային բնութեամբ այլ միաւորութեամբ անօրէնութեանն աստուածավայելչարար: Եւ յետ երեսուն ամի եկն ի մկրտութիւն՝ մկրտեցաւ ի Յորդանան ի Յովհաննէ, վկայեցաւ ի Հօրէ. Դա է Որդի Դմ սիրելի Պաշեալ զքառասուն տիւ և զքառասուն զիշեր՝ յետ այսորիկ փորձեցաւ ի սատանայէ: Բանն մարմնացեալ զկոյրան լուսաւորեաց և զգիշերն ի տիւ փոխեաց: Զչորեքօրեայն զՈւր եղիքն զոյգընթաց արար Բանն մարմնացեալ: Ապտակեցաւ և չարչարեցաւ՝ ոչ սոսկ մարդոյն ասեմ զչարչարանս: զխաչն և զմահն և ոչ զնշանագործութիւնն միայնում Բանին Աստուծոյ: այլ միաւորութեամբն անօրէնութեամբ. քանզի Բանին Աստուծոյ մարմնացելոյ են ամենայն բարձրագոյնքն և խոնարհագոյնքն: Եւ այսպէս, կամօքն եկն ի խաչ մեռաւ և թաղեցաւ, և յերրորդ աւուր յարեաւ ըստ Գրոց: զի տիրեցէ կենդանեաց և մեռելոց: Եւ յետ քառասուն տունջեան և քառասուն զիշերոյ համարձաւ յերկինս որպէս տեսին առաքելոքն. նստաւ ընդ աջմէ Հօր, որպէս ետես սուրբն Ստեփաննոս ի վրկայելն իւրում՝ ասէ. Տեսանեմ զերկինս բացեալ և զԹիսուս: զի կայ ընդ աջմէ Աստուծոյ: Եւ գալոց է նովին մարմնովն և փառօք՝ դատել զկենդանիս և զմեռեալս: որոյ թագաւորութեանն ոչ է վաղձան:

Եւ յետ այսորիկ՝ որպէս Եղիազովն Գրիգոր Աստուածարանն ասէ. Մի է Աստուած՝ Հայր կենդանի Բանին, էական իմաստութեանն և զօրութեան կերպարան իւրոյ: կատարեալ՝ կատարելոյ ծնօղ, Հայր Որդոյ Միածնի. միմիայն ի միայնոյ, Աստուած յԱստուծոյ՝ կերպարան և պատկեր Աստուածութեանն. Բան զործաւոր, իմաստութիւն պարառական, ամենեցուն ընդ լինելութեամբ անկեղոցս զօրութիւն և բոլորիցս արարող. Որդի ճշմարիտ անտեսանելոյն, անապական անապականին, անմահ անմահին, մշտնջենաւոր մշտնջենաւորին: Մի սուրբ Հօրի՝ Աստուծոյ զէութիւնն ունելով, և Որդուով երեւեալ յայտնապէս մարդկան. պատկեր Որդոյ՝ կատարեալ և կատարելոյ, պատճառ կենդանութեան, սրբութիւն՝ սրբու-

թեանց շնորհօց, որով ծանուցանի Հայր, որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Որդի Աստուած, որով ամենեքեան, Երրորդութիւն կատարեալ՝ փառօք և մշտնջենաւորութեամբ և թագաւորութեամբ, անբաժանելի և անօտարելի՝ ոչ ստեղծական ինչ և ոչ ծառայական յԵրրորդութեանն, և կամ ներքսածական՝ որպէս թէ յառաջագոյն ոչ եղելոյ, զկնի ի ներքս ածաւ. և ոչ երբեք նուագեաց Որդի ի Հօրէ և ոչ յՈրդոյ Հօրի, այլ անփոփոխելի և անայլայլելի է միշտ Երրորդութիւնն: Եւ մեք երկրպագեմք Հօր և Որդոյ և Հօղոյն սրբոյ. Աստուած՝ զՀայր, Աստուած՝ զՈրդի, Աստուած՝ զսուրբ Հօրի, մի բնութիւն երից առանձնաւորութեանցն իմանալեաց, կատարելոց՝ ըստ ինքեանց յէութիւնս բաժանելոց թուով, ոչ բաժանելոց աստուածութեամբն:

Ընդունիմ և զերկոտասան գուխան երանելոյն Նիւրդի որ ընդդէմ Եսեսորի ասացեալն է՝ այսպէս թէ Որ ոչն հաւատայ թէ Բանն Աստուած չարչարեցու մարմնով խաչեցաւ մարմնով, ճաշակեաց զմահ մարմնով, եղև անդրանիկ մեռելոց՝ քանզի միշտ կենդանի է և կենդանացուցանէ զամենեսեան որպէս Աստուած՝ եղիցի նոզովալ: Եւ յետ այսորիկ որպէս Աստուածարանն Գրիգոր և Գրիգոր Եղիկեարիա և Բասիլիոս Կեսարու եպիսկոպոս և Աթանասիոս և Նիւրդոս Հայրապետ Աղեքսանդրի և սուրբն Գրիգոր Պարթև Հայրապետ Հայոց Մեծաց՝ ուսումնասիրութեամբ և գիտութեամբ Աստուծոյ ճանաչեալ զՀին և զՆոր Կտակարանս, այսպիսի հասու եղեալ՝ մի Բնութիւն Աստուածութեանն, երից առանձնաւորութեանցն: Ըստ որում ես և հաւատացեալ ինձ հօտս այսպէս խոստովանիմք աներկբայելի հաւատով և զարդարիմք երկեք ժողովքս այսօրիկ՝ ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն, սահմանս զոր եղեալ է ԵԹՂ. աստուածաշունչ սուրբ հարցն որ ի Երկիս որոց զլիաւոր սուրբն Ռատակէս Հայրապետ Հայոց Մեծաց, և ասացին այսպէս վասն Բանին մարմնացելոյ, թէ Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնեալ և ոչ արարեալ իջեալ ի յերկնից, մարմնացեալ և մարդացեալ ի Սրբոյ Կուսէն ի Մարիամայ, չարչարեալ

այսինքն խաչեալ թաղեալ և յերրորդ սուր յարուցեալ, համբարձեալ յերկինս և զայ գատեղ զկենդանին և զմեռեալս որոյ թագաւորութեանն ոչ է վաղձանս Նմանապէս և զամենայն ազանգս նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական Յկեղեցւոյ: Նախ առաջին զԱրիսու որ զՈրդի արարած կռէր և ոչ զԲանն մարմնացեալ ի Սրբոյ կռուէնս այլ ասէ՝ Նա է անդրանիկ ամենայն արարածոց և Նովա արար զամենայն: Ըստ նմին և ԾԺ. սուրբ հայրապետքն՝ որ ի նոստանդնուպոլիս ժողովոյն, որք Մակեդոն՝ մարտընէին ընդ Հոգին սուրբ, նզովեցին և ի բաց ընկեցին: Նմանապէս և Մ. սուրբ հայրապետքն * որ յԵփեսոս ժողովեցան և զամբարիշտն Նեստորիոս նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ Յկեղեցւոյ որ անդուն բերանով ասէ. Ոչ է պարտ և արժան զՄարիամ սուրբ կոյս աստուածածին խոստովանել, այլ մարդածին և ոչ զխաչեալն Բրիսաոս՝ Աստուած, այլ տաճար եղեալ Աստուծոյ Բանին, և զԲանն ոչ խոստովանել մարմին եղեալ ըստ աւետարանին աւանդութեանց՝ Աստուած ի մարմնի բնակեալ, այսինքն ի Բրիսաոսին՝ ի Մարիամայ ծնեցելոյ մարդոյն, զուզապատիւ զնա կամեցեալ ցուցանել կամ պակաւ ինչ մեծագոյն՝ միւսմ ի սրբոց և հոգեկիր արանց, և բաղում և այլ հայհոյութիւնս խօսեցաւ զի յորժամ զսորա ազանդակցաց բանս ի մէջ բերցուք՝ պատմեցուք զբովանդակն:

Նզովեցին և զԵւաթէս, որ էր վանական ի նու կղզի, որ զմարմինն տէրունական առ աչօք խոստովանի և ոչ ի մարդկային բնաւորութենէս՝ այլ ինքն իսկ մարդ կերպարանեցաւ, ասէ յարգանդի կուսին, ոչինչ առնելով ի բնութենէ կուսին: Նբզովեցին և զՄարկիլոս Լիբեացին, որ զսուրբ Նըրսրգութիւնն մի գեմ խոստովանի և ոչ երկն անձինս կատարեալս: Նզովեցին և զԱպօղինարոս Լաւողիկեցի, որ մասն ինչ առեալ ասէ Բրիսաոսի այսինքն մարմին միայն՝ և ոչ բովանդակ մարդ եղեալ, աստուածային էր, ասէ՝ հոգևորութեամբ հոգիացեալ և պէտք

ինչ ոչ էին նմա մարդկեղէն հոգոյ: Նզովեցին և զՄարկիոն Պոնտացի, որ ասաց թէ Աստուած, որ զամենայն արար՝ չէ բարերար և ոչ հայր բարերարին Բրիսաոսի այլ այլ ոմն է արդար և ստոյգ, և Բրիսաոս մարմին ի մէջ ոչ էաւ: Նզովեցին և զՄարկեղոս և զՓոտինոս և զՍոփրովինոս, որ զԲանն ազգումն ասեն, և զազգումն բնակեալ յայնմ, որ ի զուակէն Գաւթին եղև և ոչ էութիւն ինչ անձնաւոր: Նզովեցին և արտաքս ընկեցին ի կաթուղիկէ առաքելական Յկեղեցւոյ զՊօղոս Սամոստացի և զաուսարն Լեոնի և զժողովն Բարդղղոնի զի ասացին երկուս բրնութիւնս և երկուս կերպարանս ի Բրիսաոս Յիսուս յետ միաւորութեան տնօրէնութեանն ի Սուրբ կուսէն, որ լինին յայնապէս երկու անձինք: Նզովեցին և զՄեկերոս, որ ասաց թէ մարմինն Բրիսաոսի ապականացու էր մինչև ցյարութիւնն, և յետ յարութեանն արար զնա անապական: Նզովեցին և զՄանտանոս, որ զինքն Հոգին սուրբ անուանէ և կախարդութեամբ և պոռնկութեամբ վարի: Նբզովեցին և զՄակեդոնիոս, որք զՀայր և զՈրդի խոստովանին, և զՀոգին սուրբ ուրանն: * Նզովեցին և զՄելքիսեղեկիտան, որ զՄելքիսեղեկ Աստուած անուանեն՝ թէ նա է Որդին Աստուծոյ: Նզովեցին ... իոս, որ զմարդկայինն բնութենէ ասեն՝ զբի որպէս մոմ մատանեալ, և շուրջ գան ողիք՝ փոփոխմամբ և ցանկութեամբք ի միմեանս իջանն: Նզովեցին և զՀերովդիանոս, որ ասեն թէ Հերովդէս էր Բրիսաոսն և արդ նմա մեան: Նզովեցին և զԱրքանդեղիտան, որ զհրեշտակապետն Աստուած զոլ ասեն՝ թէ նա մարմնացաւ ի Սուրբ կուսէն: Նզովեցին և զԵւաթիանոս, որ զապաշխարութիւնն ոչ ընդունին: Նզովեցին և զԱղէնաթոն և զՄանի և զԿուսմուկիոս ** և զԹէոդորոս Տարսոնացի և զԹէոդորիտոս, որ կպիսկոպոս էր կիւրղոս քաղաքի և զԱլիակ և զԲարձուսմա ընծիհնացի, որ զբնութիւն Որդւոյ յերկուս բաժանեն և աստուածութեամբն անարարելի ասեն՝ զխաչն և զմահն մարդոյն միայն կազմեն և

* Ներշն կերպար պակաս են 4. 58 ծնագրում:
 ** Օր. նոստովանի, որ եւ ուղիղ է՝ իսկապէս Մանի կերպար անունը:

* Օր. երկուսինքն:

ու միաւորութեան անօրէնութեանն խոստովանին:

Ընդ նմին նզովեմք ես և հաւատացեալ ինձ ժողովուրդս: և արտաքս ընկենումք ի սրբոյ Եփեղեցւոյ, զամենայն հերձուածօզս զորս նզովեալ է: սուրբ և աստուածաշունչ հարցն իմոց, քանզի գրեալ է, թէ Զգոյշ լիւրութք ի շար մշակացն,* և զիտասջիբ զայն պիտիան: որ այնպէսն գնայցեն: արտաքոյ վարդապետութեանն զոր զուքն ուսարութք, և դարձեալ թէ Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ յորում եղ զձեզ Հոգին սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ Տեառն:** Արդ և ես զոհացայ զԱստուծոյ ի վերայ այսոցիկ: որ ասացանս յիմ նուաստ*** զիտութենէս: և աղաչեցուք զմարդասէրն Զրիստոս տալ զգուշութիւն առ ի պահել զոր ինչ լուսքս և ծանեայք՝ զուղիղ հաւատս զի և մեք և զուք ուրախ լիցուք: և հերձուածօքքն զամօթ զգեցցին. ինդրեսցուք ի Տեառնէ: զի ընդ հաւատոյս վարձս արժանաւորս շնորհեցէ մեզ՝ զի ի Նորա փառս կեցցուք: և մի աստօքս վրիպիմք ի յաւիտենական հանգստեանցն: զոր պատրաստեալ է ընտրելոց իւրոց: Այլ և բարեխօսութեամբ ս. Աստուածածնին եղիցուք նմանօք այնոցիկ. որք հաւատովք և եկայնամտութեամբն ժառանգեցին զաւետիան Աստուծոյ: Նման փառք Ամենատեառնն: որ վասն մերոյ վրիպութեան մարդացաւ և մարդակերպ շրջեցաւ: եկեր իբրև զմեզ և արբ: տանջեցաւ: չարարեցաւ: խաչեցաւ: բեկեռեցաւ: և վերացաւ և նստաւ ընդամէ Հօր՝ Ծնօղին իւրոյ: և Հայր կենդանացոց զամենեսեանն: որ ի նա հաւատացին: և հաղորդեցան աստուածեղէն փառացն: և նորոգեցան ի փառս անպատումն. և իշխանութիւն ետ որդիս Աստուծոյ լինել: և եցոյց նոցա հայր շնորհաց զԾնօղն իւր: և հրաման ետ մեզ Հայր կոչել զԱստուած: Արդ՝ զճշմարիտ Որդւոյն Աստուծոյ եղբարք անուանել: զորս առեալ Որդւոյ առ Հայր մատուցանէ: թէ Ահաւասիկ ես և մանկունք իմ: զոր ետուր ինձ:**** Հայր. և դարձեալ ասէ. Պատ-

մեցից զանուն Զո եղբարց իմոց: ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զԲեդա* որպէս վասն բարեօք դաւանութեանն Պեարոսն՝ զԶրիստոս Որդի Աստուծոյ ծանուցեալ: ըստ որում և զերանութեան անուն ժառանգեաց: և թէ Դու ես վեմ: և ի վերայ այդք վիմի շինեցից զեկեղեցի իմ: և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցին:** Ընդ նմին հաւատացան նմա փակեմք արքայութեանն երկնից և յերկրի: որոյ եղբուք զուք որդիք և ժառանգաւորք նորին աթոռոյ: ուղիղ հաւատով և բարբառք խոստովանութեամբ՝ Յամբիշոյ մետրապօլիտն: Պօղոս Արուեստան եպիսկոպոս: Գարբիէլ Տաճկա եպիսկոպոս: Եթիման Հերթա եպիսկոպոս: Սիմօն Ենիուէլի եպիսկոպոս: Գարբիէլ Զարմա եպիսկոպոս: Սարասիսոյ Կոհնի Նորահան եպիսկոպոս: Բենիամին Սըբնգի եպիսկոպոս: Ստեփաննոս Արմնոյ եպիսկոպոս: և այլ բազում եպիսկոպոսունք եպիսկոպոսակցօք և սարկաւազօք և ուխտիւ սրբոյ Եփեղեցւոյ: որք ինդրեցին զհաւատ քրիստոսասէր Հայոց՝ որք ի դրան արքունի հասեալ կայք: Ի ինդրոյ ձերմէ: հրամանաւ տերանց՝ ես Կոմիտաս Մամիկոնից եպիսկոպոս: որ յաջորդեցայ ի կաթօղիկոսութիւն Հայոց Մեծաց՝ ետու զայեակարս զայս բողոքով սրաիւ և աներկրայելի հաւատով առաջի բազում նախարարաց Հայոց և այլազոց քրիստոնէից: որ ի դրան արքունի հասեալ էին՝ մանաւանդ առաջի մեծի տանուտեառն Խոսրով Ենուսն կոչեցելոյ: որոյ ծանաչելը անուն Սմբատ: յազգէ Բաղրատունեաց՝ շինեալ ես և հաւատացեալ ինձ հօտս ի վերայ հիման առաքելոց և մարդարելից: և սրբոյն Գրիգորի՝ կենդանի մարտիրոսին Զրիստոսի: և որք ըստ նմանէ սուրբ արքն: Որով և մեք ոչ խոստրիցուք քան զասացեալ հաւատս զսուրբ և զաստուածաշունչ հարցն՝ ոչ յաջ և ոչ յահակ. զի ճշմարիտ զովելին Աստուծոյ միայն վայել է գիտել: և որոց յայանէ սուրբ Հոգի մարդկանս այլ ազգ զուղեալ բանիւք: վասն անբաւ լայնութեան ծովու յիմաստութեան: Սակայն ի մեզ մին և եթ պահեցի զգուշութեամբ՝ ուղիղ հաւատովք և առա-

* Փիլիպ. Գ. 2
** Գործք Դ. 28:
*** Օր. նուաստ յիմաստ.
**** Տասայր Զ. 48.

* Սաղմ. ԴԱ. 25.
** Մթ. ԺԶ. 18.

քինի գործովք հասանել ի նաւահանդիսան խաղաղութեան երկնից արքայութեանն, անշարժելի հնազանգութեան չօրն հաւատոյ անմարմնոյն, և կամարար մարմնականացն, և ձայնակցելով մեզ ուզիղ հաւատով մի հօտ լիցուք քաջ չօվուրն, և կամ որդիք՝ ըստ աւետարանին բանին, զի երեւեալ ճշմարիտ չօվուպետին՝ արժանի եղիցուք ընդունել զանվաղձան և զանթառամ փառաց զպսակ:

Յամի Իւրդի Լւորդի Ապրուէզ Խոսրովու արքայից արքային՝ որդոյ Որմզդի, Մարմարութայ եւ Պետրոս՝ եպիսկոպոսք ի կողմանս Ասորեստանի, հասին ի մայրաքաղաքն Հայոց ի Դուին: Եղազս Կոմիտասու Հայոց կաթողիկոսի, յորոց եւ ընտրեալ զգիւս ուղղափառ հաւատոյ՝ որոց պատճէնն է այս:

Մէք մեղաւորք և կրտսերք Մարմարութայ եւ Պետրոս՝ շնորհուն Աստուծոյ եպիսկոպոսք ուղղափառք որ են ի կողմանս Ասորոց, զճշմարիտ հաւատս յամենայն կողմանս ցուցանեմք յայանապէս. քանզի ոչ է մոռացեալ մեր զբան Առաքելոյն, որ ասէր. Եղբրուք պատրաստք պատասխանի տալոյ ամենայնի, որ խնդրէ ի ձէնջ զբան հաւատոյ. և վասն այսորիկ խնդութեամբ և լի սրտիք մերովք խոստովանեմք՝ մինչ կոչեմք մեզ յօգնականութիւն զԱստուած ճշմարիտ: Եւ թէ հաւատ կամ խոստովանութիւն քան զայն, որ ի Նիկիա քաղաքի ի սուրբ եպիսկոպոսացն ՅԺԸ-իցն, որ մի ոմն ի նոցանէ էր հայր և վարդապետ մեր սուրբն Արիստակէս՝ զլուխ եպիսկոպոսոց Հայոց. նմանապէս նման նմին հաստատեցին ԾԾ. սուրբ եպիսկոպոսունքն որ ի Կոստանդնուպօլիս ժողովոցն. ըստ նմին հաստատեաց և ընկալաւ ի ժողովն Կիւրղոս պատրիարզոս աղեքսանդրացւոց՝ հանդերձ Մ. եպիսկոպոսօքն, որ ընդ նմա եկեալ էին յԾփեսոս. քան զայն հաւատ աւելի ոչ ընկալաք և ոչ ընդունիմք՝ ոչ ի վերայ յաւելումք և ոչ այլ ի նմանէ պակասեցուցանեմք ինչ: Բայց զհաւատ անբիծ և անարատ ընդունիմք զամենայն աւուրս կենաց մերոց, և նդովեմք զամենայն հերետիկոսս, որ ի ժամանակս ժամանակս կացին ընդդէմ սուրբ կա-

թուղիկէ առաքելական Նիկեացոյ՝ զառաջինս և զմիջինս և զվերջինս, և որք ընկալան և կամ որք ընդունին զնոսս:

Դարձեալ նդովեցաք և նդովեմք զայնօսիկ, որ ասեն թէ յերկնից երեք Տէրն ըզմարմինն և ոչ ճշմարտապէս հաւատան, թէ ի Մարիամայ սրբոյ կուսէն ծնաւ Աստուած մարմնացեալ և մարդացեալ՝ Բանն մարմնացեալ չօր: Ըստ նմին նդովեմք և զայնօսիկ, որ ոչ խոստովանին, թէ յայն մարմինս որ առ ի Մարիամայ՝ որ էր ի բնութենէ մերմէ, չարչարեցաւ և մեռաւ մեր փոխանակ Քրիստոս, որ է Աստուած ամենակալ: Եւ կամ որք ասեն, թէ առաջօք կամ կարծելով երեւեցաւ Քրիստոս աշխարհի և ոչ ճշմարտապէս նմանեցաւ մեզ առանց մեղաց. նդովեմք զնոսս, և դարձեալ նդովեմք զՋաքարիա և զՍարա և զԳիօրգիա, որ անուամբ կոչին եպիսկոպոսք Զուղիանից, և զսուա ձեռնադրութիւնս նոցա՝ որ անուամբ և ոչ ճշմարտութեամբ, և զամենեսեան որք ընդունին զնոսս: Եթէ յեպիսկոպոսաց որք ընդունին զմի ի մոլորելոցն Ջաքարիայ, կամ զՍարա կամ զԳիօրգիա՝ առանց ժողովոյ եպիսկոպոսաց մի՝ իշխեսցեն ընդունել կամ հաղորդել ընդ նոսս:

Եւ վասնզի հաւատարիմ լիցի թուղթս մեր այնոցիկ որք կարդան զսա՝ կնքեցաք ըզթուղթս մերով մատանեաւն առաջի ուղղափառ ընկերաց մերոց՝ Եղիայի և Սարգսի և Երախտեաւ քահանայից, և Կիւրաղոսի և Ղարայ սարկաւազոց և Գեորգեայ և Զինպայ ուխտաւորաց, և տուք ա բարի կամօք ցզլուխ և ցառաջնորդ Տէր Կոմիտաս կաթողիկոս Հայոց Մեծաց, և ընկալեալ ի ժառանգաւորաց սրբոյն Գրիգորի՝ դարձաք ուրախութեամբ մեծաւ ի սուրբ եկեղեցիս մեր:

